

**ՊԱՏՄԱԿԱՆ ՀԱՄԱՆՈՒՆՈՒԹՅՈՒՆԸ «ՀԱԳՈՒՍՏ» ԻՄԱՍՏԱՅԻՆ
ԴԱՇՏՈՒՄ**

ԼՈՒՍԻՆԵ ՂԱՄՈՅԱՆ

Ամեն մի լեզու իր հաղորդակցական կարևորագույն դերը (գործառույթը) իրացնում է բառերի շնորհիվ, որոնցում արտացոլվում են մարդու հասարակական և ճանաչողական փորձը, ժողովրդի պատմությունը, ժողովրդի մտածողությունը: Իբրև ինքնուրույն գործածություն ունեցող իմաստակիր միավոր՝ բառը հանդես է գալիս ձևի և բովանդակության միասնությամբ:

Քննելով հայերենի «հագուստ» իմաստային խմբի բառերի իմաստաբանական առանձնահատկությունները՝ նկատել ենք, որ կան հագուստի անվանումներ (նաև հագուստի մաս, կտորեղեն), որոնք նույն գրությամբ կամ արտասանությամբ հանդիպում են լեզվի զարգացման տարբեր փուլերում, երբեմն նաև բարբառախոս վայրերում, որոնք, հավանաբար, իրարից անկախ են ծագել և ունեն բոլորովին տարբեր իմաստներ: Դրանք, փաստորեն, պատմական համանունության դրսևորումներ են և, մեր կարծիքով, կա մ առաջացել են իմաստային մթագնման պատճառով, կա մ էլ պատահական նմանության արդյունք են¹: Նման բառերը կարիք ունեն մանրամասն քննության, հետևաբար ստորև կանդրադառնանք դրանցից մի քանիսին:

Բարուր²: Առաջնային իմաստն է՝ «պատրվակ, կեղծ պատճառ, պատճառ առիթ, ամբաստանություն», որի բնիկ հնդեվրոպական ծագումը (*bherō-ro- (*bher-) «բերել, տանել» արմատից) Գ. Ջահուկյանը

¹ Ն. Պողոսյանն այս երևույթը համարում է նաև «իմաստափոխություն համանունության հիմունքով» (տե՛ս Ն. Պողոսյան, Վաղ աշխարհաբարի իմաստափոխության դասակարգման նոր փորձ, «Պատմաբանասիրական հանդես», Եր., 2012, № 2, էջ 230):

² Բերված բոլոր օրինակները համեմատել ենք հետևյալ բառարաններով. **Հ. Աճառյան**, Հայերեն արմատական բառարան (այսուհետև՝ ՀԱԲ), հհ. Ա-Դ, Եր., 1971, **Գ. Ջահուկյան**, Հայերեն ստուգաբանական բառարան (այսուհետև՝ ՀՍԲ), Եր., 2010, «Ժամանակակից հայոց լեզվի բացատրական բառարան» (այսուհետև՝ ԺՀԼԲԲ), հհ. 1-4, Եր., 1969-1980, **Էդ. Աղայան**, Արդի հայերենի բացատրական բառարան (այսուհետև՝ ԱՀԲԲ), Եր., 1976, **Ռ. Մաքսայետոյեան**, Արեւմտահայերէն-արեւելահայերէն նոր բառարան (այսուհետև՝ ԱԱՆԲ), Եր., 2011, **Ա. Սարգսյան**, Արեւմտահայերէնի բառարան, Եր., 1991, **Գ. արքեպիսկոպոս Ճերէճեան**, **Փ. Կ. Տօնիկեան**, **Ա. Տէր Խաչատուրեան**, Հայոց լեզուի նոր բառարան, հհ. 1-2, Պէյրոս, 1992, **Ռ. Ղազարեան**, Գրաբարի բառարան (այսուհետև՝ ԳԲ), հհ. 1-2, Եր., 2000, **Սո. Մայիխատեան**, Հայերեն բացատրական բառարան (այսուհետև՝ ՀԲԲ), հհ. 1-4, Եր., 1944-1945, Հայոց լեզվի բարբառային բառարան (այսուհետև՝ ՀԼԲԲ), հհ. 1-7, Եր., 2001-2012, **Ռ. Ղազարյան**, **Հ. Ավետիսյան**, Միջին հայերենի բառարան (այսուհետև՝ ՄՀԲ), Եր., 2009:

«քիչ հավանական» է համարում (ՀՄԲ, 1, 122): Գրաբարում ունենք *բարուրք*, *բարուր*, *բարուրանք* հնչատարբերակները, որոնք գործածվել են դարձյալ վերոնշյալ իմաստներով՝ «1. պատճառաբանություն, պատճառանք, 2. շինծու սուտ պատճառ պատճառաբանություն, չքմեղություն, պատրուակ (հնչյուն՝ «Ապա թե ապիցես, վաստակեալ եմ ի տուրնջեան, և ոչ կարեմ յառնել, այդ բարուրք է» (ՆԲՀԼ, 1, 468)), 3. պատճառ, առիթ, 4. կեղծ մեղադրանք, զրպարտություն» (ԳԲ, 1, 276):

20-րդ դարում արդեն *բարուր* բառանունն արձանագրված է երկանդամ համանունական շարքով՝ *բարուր*, *բարուրել* (1) «բալուլ, բալուլել» - *բարուր* (2) «բարուրք» իմաստներով, և որպես առանձին բառանուն վկայված է *բարուրանք* գոյականը վերոնշյալ «1. պատճառաբանություն, պատճառանք, 2. շինովի կեղծ պատճառաբանություն, պատրուակ (արդարանալու՝ խուսափելու համար), 3. մեղադրություն, զրպարտություն, մեկի շլնքին մի բան փաթաթելը» իմաստներով (ՀԲԲ, 1, 351):

Բարբառներում համանուններ են *բարուր* (1) «բալուլ» և *բարուր* (2) «զրպարտություն, ամբաստանություն, սուտ մեղադրանք» բառանունները:

Արդի գրական արևելահայերենում արդեն *բարուր*-ը չունի համանուն և գործածված է միայն «1. խանձարուր, նորածին մանկան փաթեղացաշորերի ամբողջությունը, 2. խանձարուրի մեջ փաթաթած երեխա» իմաստներով, իսկ գրաբարյան «պատրվակ, պատճառանք, շինծու պատճառ» իմաստներն արտահայտված են միայն *բարուրանք* բառակով (ԺՀԼԲԲ, 1, 304), այստեղից էլ *բարուրել* բառակը՝ «1. նորածին երեխային բարուրի շորերի մեջ փաթաթել, խանձարուրել (բարբառներում՝ դարձյալ այս իմաստով), 2. փաթաթել, պարուրել» նշանակություններով՝ ի տարբերություն հին հայերենի *բարրել* «սուտ պատճառներ մեջ բերել» և *բարուրիլ* «մեղադրուիլ, դատապարտուիլ» բառակների արտահայտած իմաստների (ՀՄԲ, 1, 429):

Փոխան: Գրաբարում *փոխան* (կամ՝ *փոխանորդ*) բառակն ունի հետևյալ իմաստները՝ «1. տեղակալ, փոխարինող, 2. (եկեղց.) տեղապահ, 3. մեկին փոխյաջորդող անձ, յաջորդ, 4. այն, ինչ որ տրուում է մի բանի փոխարեն, որևէ բանի համարժեքը, 5. մի բանի երկրորդ նոյնական օրինակը, կրկնակ» (ԳԲ, 2, 602):

Միջին հայերենում *փոխայն* բառակն ունի միայն «փոխարեն, փոխանակ» նշանակությունը:

Ստ. Մալխասյանցը, բացի փոխան (1)-ից՝ վերոնշյալ իմաստով, նշում է նաև փոխան (2) համանունը, որն ունի «սպիտակեղենի փոխնորդ, մասնաւորապէս՝ վարտիք (տղամարդկանց և կանանց)» իմաստը, այստեղից ունենք բազմաթիվ դարձվածքներ՝ «Փոխանը կատու ընկնել»՝ *սաստիկ վախենայլ*, «Փոխանը ոտքերն ընկնել»՝ *վատ վիճակի ենթարկվել*, և այլն (ՀԲԲ, 4, 508):

Այս համանունները գործածվում են նաև արդի գրական արևելահայերենում, իսկ արդի գրական արևմտահայերենում այն գործածվում է միայն

«մի բանի տեղ՝ փոխանակ, փոխարեն, դիմաց» իմաստով (ԱԱԼԲ, 360):

Բարբառներում *փոխան* (Ար., Ղրբ., Խտջ., Շմխ., Կր. (Շիր.)) և *փոռան* (Խտջ.) հնչատարբերակներով բառաձևն ունի միայն «1. վարտիք, ոտաշոր, 2. շավվար» իմաստները:

Հարկ է նշել, որ միջին հայերենում այս բառաձևից ունենք ածանցավոր կազմություն՝ *անփոխան*՝ «անփոխարինելի, անփոխանակելի» իմաստով, իսկ արևելահայերենում և բարբառներում *անփոխան*-ը գործածվում է «1. փոխան չունեցող, առանց փոխանի, 2. *փխբ.* աղքատ, տկլոր» իմաստներով:

Հագնել: Առաջնային իմաստն է «կարկատել, կցկցել»: Հ. Աճառյանը նշում է. «Հագնել՝ կարկատել» պետք է բոլորովին նոր բառ համարել, որի հետ կապ չունի հագնիլ «զգենուլ» ժողովրդական ձևը, որ իմաստով էլ տարբեր է» (ՀԱԲ, 3, 4):

Գրաբարում մեզ հայտնի «*հագնել, հագնվել*» իմաստն արտահայտվում է *հագանել//ագանել* բառաձևերով, իսկ միջին հայերենում՝ *հագնել//հագնիլ//հագնուլ* հնչատարբերակներով:

Հագնել և *հագնիլ* բառաձևերի առաջնային իմաստները պահպանվել են արդի գրական արևմտահայերենում, իսկ արդի գրական արևելահայերենում *հագնել* բառաձևն ունի «1. շորերը վրան անցկացնել, կոշիկները ոտքերին անցկացնել, 3. իր վրա անցկացնել, կապել, 4. *փխբ.* զարդարվել, 5. պարուրվել» իմաստները:

Մշտակ: Փոխառվել է միջին հայերենում՝ իրանական լեզուներից (muštak, mušta) և ունի «կենդանիների մազոտ մորթուց կարված վերնազգեստ, քուրք» իմաստը, ինչպես «Եւ ոչ ձմեռն ուզէ մշտակ (ՀՄՀ, 377)» (ՄՀԲ, 525): Նույնն է՝ *մուշտակ*:

Արդի արևելահայերենում գործածական է *մուշտակ* հնչատարբերակը՝ նույն նշանակությամբ՝ «1. անասունների մազոտ մորթին, 2. մորթուց կարված վերնազգեստ»:

Արարատյան և Ղարաբաղի բարբառներում *մշտակ*-ը բազմիմաստ բառ է և ունի բոլորովին այլ իմաստներ, ինչպես՝ «սալորի և դամբուլի սպիտակ գույն, չհասունացած անկորիզ պտուղը, որ ունի երկար ու տափակ ձև» և «դեռևս չհատիկավորված կանաչ լոբի» (ՀԼԲԲ, 4, 70):

Ասպապ: Միջինհայերենյան փոխառություն է (թուրք. espap<արաբ.), որն ունի «շոր, զգեստ, հագուստ» նշանակությունը, ինչպես՝ «Քան զասպապ ի ծալն էի, նա տրկուկ տրկուկ քակեցայ (ՀԵ, 159)» (ՄՀԲ, 79):

Արդի գրական հայերենում այն ունի բոլորովին այլ իմաստ՝ «(բսբ.) վայրի ունաբի մի տեսակ», ինչպես՝ «Շատ անգամ էր նա մազլցել այս ժայռերի կատարները վայրի թռչունների բներ քանդելու և ասպապի հազվագյուտ պտուղներ հավաքելու համար (Սերո Խանգաղյան)» (ԺՀԼԲԲ, 1, 187):

Խարդան: Միջին հայերենում այս բառաձևը փոխառվել է թուրքերենից (qaftan), որ նշանակում է՝ «կանանց երկար վերնազգեստ», ինչ-

պես՝ «Գացէք մեծ վարպետ բերէք, աղուորին խաբդան ձնեցէք (ՀԲ, 424)» (ՄՀԲ, 298):

Բոլորովին այլ նշանակություններով այս բառանունը գործածվում է Պոլսի և Ակնո բարբառներում՝ «1. նավապետ, կապիտան, 2. առաջնորդ, ղեկավար, 3. *փխբ.* նավապետի կամ առաջնորդի հագուստ» (ՀԼԲԲ, 2, 258):

Նախ: Առաջնային իմաստներն են՝ «առաջ, առաջուց» և «գլխաւոր, հինը, առաջինը»: Այս արմատի հետ են համեմատում իրանական *naxust* ձևը (ՀԱԲ, 3, 419):

Նույն նշանակություններով՝ «1. առաջ, նախքան, նախապես, մի բանից առաջ, 2. առաջինը, գլխաւոր, նախորդ, նախկին, հին», այս բառակն զործածվել է գրաբարում և այժմ նաև՝ արդի հայերենում:

Միջին հայերենում նույն գրությամբ և արտասանությամբ ունենք փոխառություն պարսկերենից (*nāx*)՝ «թել, մանվածք, բամբակե հյուսվածք» նշանակություններով, ինչպես՝ «Եւ են այտքիկ... նախ կանաչն, կարմիր նախն, դէղին շուրջառն (ԺԵ հձհ, Ա, 129)» (ՄՀԲ, 562):

Կուկուլ: Աճառյանի մոտ *կուկուլ*-ը հունարենից փոխառված *կնգուլ*-ն է՝ «աբեղայի գլխարկ» նշանակությամբ (ՀԱԲ, 2, 657):

Միջին հայերենում այն ունի «մետաքս, մետաքսաթել» իմաստը՝ դարձյալ փոխառված հունարենից, ինչպես՝ «Տուտ ըլ հարիր. որ է այն որդն որ կուկուլ կու հանեն (ԱՍԱՍ, 578)» (ՄՀԲ, 385):

Արդի արևելահայերենում *կուկուլ*-ը կազմում է եռանդամ համանունական շարք՝ կուկուլ¹ «կուլատակ» - կուկուլ² «կնգուլ» - կուկուլ³ «հնդկահավ», իսկ «գլխանոցի մի տեսակ, շերամի բոժոժ» իմաստն արտահայտվում է *կուկուլա* բառով (ԺՀԼԲԲ, 3, 241): Այս բոլոր իմաստները կան նաև բարբառներում, հիմնականում՝ Տրապիզոնի բարբառում:

Հանգիստ: Այս բառանունը ինչպես արդի գրական արևելահայերենում, այնպես էլ գրաբարում եղել է բազմիմաստ բառ՝ 11 իմաստով՝ «1. դադար, հանգստանալը, դադար՝ հանգիստ առնելը, 2. հանդարտություն, անդորրություն, խաղաղություն, 3. հանգստանալու՝ բնակութեան տեղ, կայան, բնակարան, 4. քուն, նինջ, 5. նման. մահ, 6. գերեզման, շիրիմ, 7. վերջ՝ արարտ մի բանի, 8. արևի մայր մտնելը, 9. սաղմոսերգութեան ընթացքում ձայնի ընդհատում, 10. (եկեղց.) երկար աղօթքների ժամանակ ընդմիջում՝ «Խաղաղություն ամենեցուն» ասելով, 11. իդձերի լրում՝ լրացում. ինչ որ հաճելի ուրախացնող՝ հանգստացնող է» (ԳԲ, 2, 33):

Հետաքրքրական է, որ միջին հայերենում այս բառանունը մենիմաստ է և ունի բոլորովին այլ նշանակություն՝ «հանդերձ, հագուստ», ինչպես՝ «Թէ արծաթ է, թէ հանգիստ է, թէ դումաշ է, զամէն զինչ ունէին, տուին և դեռ ոչ կարացին ազատիլ (ՄԺ, Ա, 128)» (ՄՀԲ, 405), իսկ գրաբարյան *հանգիստ* բառի բուն իմաստը միջին հայերենում արտահայտվում է *հանկիստ* հնչատարբերակով:

Մոտ: Արդի գրական արևելահայերենում բազմիմաստ բառ է, ունի

11 իմաստ՝ «1. կողքին, կողքը, 2. դիմորոշ հողերով՝ վրան, հետը, 3. ոչ հեռավոր (ժամանակի մասին), 4. ոչ հեռավոր, ոչ հեռու (տարածության մասին), 5. մերձավոր, մտերիմ, հարազատ, 6. գրեթե, մոտավորապես, 7. հետ, միասին, 8. համեմատությամբ, 9. ներկայությամբ, 10. *փխբ.* հարակից, 11. շրջակայք»:

Բարբառներում *մոտ*-ը համանունական շարքի անդամ է՝ մոտ¹ «1. մոտ, 2. մերձավոր, մտերմիկ» - մոտ² «Թր. նորաձևություն, մոդա», ինչպես՝ «Ամեն տարի մորթոց հալավներուն մոտը կը փոխվի («Խաթաբալա»)» (ՀԼԲԲ, 4, 78):

Ապլախ: Այս բառանունը փոխառվել է միջին հայերենում՝ պարսկերենից (āblāḡ), գործածվել է «խայտաբղետ, խայտախարիվ» իմաստով, ինչպես՝ «Վիզն բարակ, և գունն ապլախ լինի (ԱԱԱԱ, 499)» (ՄՀԲ, 71):

Բայց, օրինակ, Մշո բարբառում այն ունի «*կնոջ մետաքսե գլխաշոր*» իմաստը:

Բացի վերոնշյալ բառանուններից, նշենք նաև, որ նման համանուններ երբեմն պատահականորեն կազմվել են բառակազմության հետևանքով, ինչպես, օրինակ, *կապավոր* ածանցավոր բաղադրությունը, որին կանդրադառնանք ստորև:

Կապալոր: Գրաբարում այս կազմությունն ունի «մեկի հետ՝ իրար կապուած, կապակից» իմաստը (ԳԲ, 1, 632), որի արմատը, բնականաբար, *կապ*-ն է:

Միջին հայերենում *կապալոր* ածանցավոր բաղադրությունը գործածվել է «կապա հագած» իմաստով, որը կազմվել է այդ շրջանում փոխառված *կապալ[յ]* (արաբ., պրսկ. qabā) բառաձևից՝ «1. հոգևորականի զգեստ, պարեգոտ, 2. ընդհանրապես՝ կանանց երկար զգեստ» նշանակություններով, ինչպես՝ «Կարմիր կապալոր աղուոր, դուն որ կ'երթաս միալոր»³ (ՄՀԲ, 361):

Նետագայում այս կազմությունը վերոնշյալ երկու իմաստներով հանդիպում ենք համանունական շարքով (*տե ս Ստ. Մալխասյանց* (ՀԲԲ, 2, 390)) *կապալոր* (1) «կապայ կրող, կապայ հագած» և *կապալոր* (2) «կապի աշխատալոր», ինչպես՝ «Կապալորները մի ժամում նորից կապեցին կտրված հեռախօսալարը և հաղորդակցութիւնը վերականգնեցին»:

Արդի գրական արևելահայերենում *կապավոր* կազմությունը գործածվում է միայն գրաբարից վերցված նշանակությամբ՝ «1. (մանգ.) կապի միջոցների (հեռախոս, հեռագիր, ռադիո և այլն) բնագավառում աշխատող (անձ), 2. գորամասերի կամ առանձին անձանց միջև կենդանի կապ պահպանող (անձ)» (ԺՀԼԲԲ, 3, 51):

Բարբառներում (օրինակ՝ Թբիլիսի, Ագուլիս, Կարին, Վան, Մալաթիա, Ակն) այս կազմությանը հանդիպում ենք «կապա հագած» իմաստով (ՀԼԲԲ, 3, 43):

³ Ա. Չոպանյան, Հայրեններու բուրաստանը, Փարիզ, 1940, էջ 432:

Լեզվական համակարգերում նման համանուններ առաջանում են նաև փոխառյալ բառի բնիկ հայերեն բառի հետ ձևով համընկնելու դեպքում՝ բնականաբար արտահայտելով ամբողջովին տարբեր բառիմաստ, կամ էլ փոխառյալ բառերի իմաստների փոփոխման ճանապարհով, այսինքն՝ տարբեր ժամանակներում տարբեր աղբյուրներից կատարված փոխառյալ միևնույն բառը ձեռք է բերում տարբեր իմաստներ, երբեմն էլ համանունական շարքի անդամ կարող է դառնալ որևէ օտար բառ: Բերենք մի քանի օրինակ:

Փռոփկ: Բարբառներում՝ Վան, Ուրմիա, Խարբերդ (Բլ.), այս բառանունն ունի «կնոջ կարճ կտրած և ճակատի վրա թափված մազեր» իմաստը, ինչպես՝ «Աղախինը... սկսեց [տիկնոջ] ճակատի վրա թափված փռոփկներից գանազան խոպոպիկներ ոլորել (Ըաֆֆի)» (ՀԼԲԲ, 7, 30):

ԺՀԼԲԲ-ում ևս արձանագրված է այս բառանունը՝ վերոնշյալ իմաստով (բրբ.) նշումով: Մակայն այսօր, երբ ասում ենք «փռոփկ», առաջին հերթին պատկերացնում ենք անհայտ ծագմամբ, բայց ժողովրդախոսակցական լեզվում լայն տարածում գտած բոլորովին այլ բարբառային *փռթ/փոնթ* բառանվանը մոտ իմաստ՝ «կտորի՝ շորի վրայի ծալք, դարս», ինչպես՝ *փռոփկներով շոր, փռոփկներով կիսաշրջագեստ, փռոփկով զուգազուլպա, հագուստի թևերին փռոփկներ* և այլն:

Ջինս: Այս բառանունը միջին հայերենում փոխառվել է արաբերենից ու թուրքերենից (jins) և վկայված է «տոհմ, ազգ, ցեղ, սերունդ» իմաստներով, ինչպես՝ «Մսքին Յուսիկ ի Տատկու դաշտեր, որ ես սև գլուխ ի Սարկալագոնց ջնսէն (ԺԷ հձհ, Ա, 30)» (ՄՀԲ, 669):

Ջինս-ը բարբառներում գործածվում է համանուններով: Այսպես՝ *ջինս* (1)-ը, պահպանելով վերոնշյալ բուն իմաստները (օրինակ՝ Արարատյան, Նոր Նախիջևանի, Կարնո, Համշենի, Վանի, Մոկսի և այլն բարբառներում), գործածվում է նաև նոր իմաստներով, ինչպես՝ «տեսակ, տիպ», «որևէ բանի՝ որևէ մեկի հատկությունները իր մեջ կրող», «տոհմիկ, ցեղական, ազնվացեղ», Թբիլիսիում ունի «ընտիր, ազնիվ» իմաստը և այլն, *ջինս* (2)-ը մի քանի բարբառներում (Ար., Մշ., Բղշ., Կր., Ջվխ.) գործածվում է «ոգի» իմաստով, *ջինս* (3)-ն ունի «տուրք բերքով» նշանակությունը:

Թեև արդի գրական հայերեններին չի անցել այս փոխառությունը, սակայն այսօր նույն գրությամբ և արտասանությամբ ունենք փոխառություն⁴ եվրոպական լեզուներից, որն ունի բոլորովին այլ նշանակություն՝ «ամենօրյա հագուստ՝ խիտ բամբակյա կտորից»⁵:

Շորտիկ: Բարբառներում բազմիմաստ բառ է և ունի տարբեր հնչատարբերակներ, ինչպես՝ *շորտիկ* (Կր., Շիր., Վն.), *շորտիք* (Մշ.), *շոռտիկ*

⁴ Ա. Հայրապետյանը *ջինս*-ը օտար բառ է համարում, որի բացատրությունը տալիս է հետևյալ կերպ. «Պինդ կտորի տեսակ, որը ստեղծվել էր Այլասկայի ոսկեխույզների համար և այն ժամանակներից ի վեր մեծ տարածում է գտել աշխարհում» (Ա. Հայրապետյան, Օտար բառերի բառարան, Եր., 2011):

⁵ <https://hy.wikipedia.org/wiki/%D5%8B%D5%AB%D5%B6%D5%BD>

(Վն., Պպ., շուշուիկ (Ուրմ.) և այլն: Գործածվում է հետևյալ իմաստներով՝ «միագույն կամ բազմագույն թելերով երկար ու նեղ ծակոտկեն գործվածք (ձեռագործի ամենապարզ ու ամենահեշտ տեսակը, որ գործում են հելունով). հանձնարարում են ձեռագործ նոր սովորող աղջիկներին՝ վարժեցնելու նպատակով, 2. Մշ. (Բղշ.) ռեզին (վարտիքի), 3. Մս. գործած վզնոց, 4. Ուրմ. գործած գոտի, որ երեխաները կապում էին մեջքին»: Այստեղից էլ՝ շորտկել (Վան) բայը, որ նշանակում է «շորտիկի նման արագ գործել՝ հյուսել» (ՀԼԲԲ, 4, 276):

Այսօր ժողովրդախոսակցական լեզվում լայն տարածում ունի շորտ//շորտիկ օտարաբանությունը՝ «կարճ անդրավարտիքի տեսակ, կիսատաբատ» նշանակությամբ (անգլ. shorts):

Այսպիսով՝ մեր հավաքած օրինակների հիման վրա կարելի է ենթադրել, որ վերոնշյալ բոլոր բառերն էլ կա՛մ բացարձակորեն տարբեր իմաստ արտահայտող համանուններ են, որոնք ծագել են լեզվի զարգացման տարբեր փուլերում, կա՛մ որոշ իմաստային նրբերանգներով տարբերվող բառեր ու բառաձևեր, որոնք իրենց իմաստային առանձնահատկությունները դրսևորում են միայն համապատասխան խոսքային միջավայրում և այդ համակարգից դուրս հնարավոր է իմաստային շփոթ առաջացնեն և չընկալվեն ընթերցողի կողմից:

Համառոտագրություններ

անգլ.-անգլերեն	թուրք.-թուրքերեն
արաբ.-արաբերեն	մանգ.-մասնագիտական
բսբ.-բուսաբանություն	պրսկ.-պարսկերեն
բրբ.-բարբառային	փխբ.-փոխաբերական
եկեղց.-եկեղեցական	

Բարբառախոս վայրեր

Ար.-Արարատյան	Շիր.-Շիրակ
Բլ.-Բալու	Շմխ.-Շամախի
Բղշ.-Բաղեշ	Ուրմ.-Ուրմիա
Թբ.-Թբիլիսի	Պպ.-Պապեն
Խտջ.-Խոտուրջուր	Ջվխ.-Ջավախք
Կր.-Կարին	Մս.-Մասուն
Ղրբ.-Ղարաբաղ	Վն.-Վան
Մշ.-Մուշ	

Աղբյուրներ

ՀՄՀ-Ա. Մնացականյան, Հայ միջնադարյան հանելուկներ, Եր., 1980:

ՀԲ-Ա. Չոպանյան, Հայրեններու բուրաստանը, Փարիզ, 1940:

ՀԵ-Հովհաննես Երզնկացի, Եր., 1958:

ԺԵ հձհ Ա-ԺԵ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, մասն Ա, Եր., 1955:

ԺԷ հձհ Ա-Հայերեն ձեռագրերի ԺԷ դարի հիշատակարաններ (1601-1620 թթ.), հատոր Ա, Եր., 1974:

ՄԺ, Ա-Մանր ժամանակագրություններ (13-18-րդ դդ.), հ. 1, Եր., 1951:

ԱԱԱԱ-Ամիրդովլաթ Ամասիացոյ Անգիտաց անպէտ կամ բժշկական նիւթոց, ի լոյս էած հանդերձ ծանօթագրութեամբք Կ. Յ. Բասմաջեան, Վիեննա, 1926:

Բանալի բառեր - *համանունություն, հագուստ, փոխառություն, գրաբար, միջին հայերեն, արևելահայերեն, արևմտահայերեն, բարբառ, ժողովրդախոսակցական լեզու*

ЛЮСИНЕ ГАМОЯН – Историческая омонимия в семантическом поле «одежда». – При изучении семантических особенностей армянских слов в семантическом поле «одежда» легко заметить интересное обстоятельство. На разных этапах исторического развития языка или диалектов имелись названия одежды с одинаковым написанием или произношением. Они возникли, вероятно, независимо друг от друга, наделены разными значениями и являют пример исторической омонимии. В статье высказана мысль, что такие омонимы – результат либо семантического затмения, либо случайного сходства. Подобные омонимы образуются при словообразовании, когда одно и то же слово, заимствованное из разных источников и в разное время, приобретает различные значения. В иных случаях иноязычное слово становится членом одноимённого ряда. Такие омонимы проявляют свои семантические особенности только в соответствующей словесной среде, а вне этой среды могут вызвать семантическую путаницу.

Ключевые слова: *омонимия, одежда, заимствование, древнеармянский, среднеармянский, восточноармянский, западноармянский, диалект, разговорный язык*

LUSINE GHAMOYAN – Historical Homonymy in the Semantic Field "Clothing". – Examining the semantic features of the Armenian words in the semantic field "clothing", we notice that there are names of clothes that have the same spelling or pronunciation in other stages of the historical development of the language or dialects, which probably originated independently and have completely different meanings. They are manifestations of historical homonymy, and in our opinion, they are either the result of a semantic eclipse or a random resemblance. Such homonyms are formed as a result of word formation, or the same word borrowed from different sources at different times acquires different meanings, and sometimes a foreign word becomes a member of the homonymous series. Such homonyms manifest their semantic features only in the appropriate verbal environment. It is possible to cause semantic confusion outside of that system and not be perceived by the reader.

Key words: *homonymy, clothing, borrowing, Old Armenian, Middle Armenian, East Armenian, West Armenian, dialect, spoken language*

Ներկայացվել է՝ 08.09.2020, Գրախոսվել է՝ 19.10.2020, Ընդունվել է տպագրության՝ 18.12.2020